ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑ ԿԱՆՉ

ՄԻՋԴԻՍՑԻՊԼԻՆԱՐ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՕԳՆԱԿԱՆ

GOETHE INSTITUT

Sprache. Kultur. Deutschland.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑ ԿԱՆՉ.

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Գյոթե ինստիտուտը փնտրում է ծառայությունների մատուցման հիմունքներով մշակութային նախագծերի և հաղորդակցության փորձագետի:
Նպատակը Գյոթե ինստիտուտի գործունեության համար ապահովել մասնագիտական աջակցություն և տեսանելիություն:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- Գյոթե ինստիտուտի միջդիսցիպլինար նախագծերի մշակման բազմակողմանի աջակցություն՝ հատկապես գիտության, արվեստի (մասնավորապես՝ վիզուալ և ձայնային) և բնապահպանության թեմաների ոլորտում:
- Տվյալ նախագծերի համար Հայաստանում, Գերմանիայում և միջազգային մակարդակում գործընկերային կապերի հաստատման և զարգացման աջակցություն:
- Տվյալ թեմատիկ ուղղություններին առնչվող կրթական և միջնորդական ձևաչափերի մշակման աջակցություն
- Նախագծի ռազմավարական և գործնական հաղորդակցության մշակման աջակցություն (այդ թվում՝ սոցիալական մեդիայի վարում, թիրախային բովանդակության մշակում, մամուլի հաղորդագրությունների տարածում, հոդվածների և խմբագրական նյութերի կազմում):
- Վերոնշյալ միջոցառումների մոնիթորինգ, վավերագրում ու գնահատում:

ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Աշխատանքային փորձ նախագծերի կառավարման, կրթության/միջնորդության, հաղորդակցության և հանրային կապերի ոլորտներում, ցանկալի է մշակութային կամ միջազգային ծրագրերի շրջանակում:
- Հայերեն և անգլերեն լեզուների բանավոր և գրավոր գերազանց տիրապետում. գերմաներենի իմացությունը դիտվում է որպես առավելություն:
- Հատկապես կարևոր է ունենալ ժամանակակից արվեստի միջդիսցիպլինար գիտելիքներ և մշակութային դիսկուրսներ՝ հատկապես գիտության և բնապահպանության ոլորտներում:
- Ստեղծագործական, ռազմավարական մտածողություն և զգայունություն մշակութային թեմաների նկատմամբ:
- Հուսալի և ինքնուրույն աշխատելաոճ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Ծառայությունների մատուցման պայմանագիր (ոչ աշխատանքային պայմանագիր)
- Վայրը՝ Երևան, Հայաստան
- Պայմանագրի մեկնարկ՝ 02.03.2026
- Տևողություն՝ մինչև դեկտեմբեր 2027
- Ծավալը՝ ըստ նախապես ձեռք բերված պայմանավորվածության

ԴԻՄՈՒՄՆԵՐ

Հետաքրքրվողները կարող են ուղարկել իրենց դիմումները (ինքնակենսագրություն, մոտիվացիոն նամակ) մինչև 15.02.2026. հետևյալ էլ. հասցեով՝

hasmik.muradyan@goethe.de

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԱՆՁ

Հասմիկ Մուրադյան
Գյոթե ինստիտուտի վարչական մարմնի ղեկավար
Էլ. փոստ՝ hasmik.muradyan@goethe.de
Հեռ. +374 60 50 47 1